Ապրանքների մատակարարման հարկային հաշիվ — Ա5936699815

## Հարկային հաշիվ
(ապրանքների մատակարարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 2 | Մայիս | 2017 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 2 | Մայիս | 2017 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Ա | 5936699815 |

Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») — հատուկ

Ճշգրտվող հաշվի

| Սերիա | Համար |
|---|---|
| | |

Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ

| | | |
|---|---|---|
| | | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | |
|---|---|---|---|
| | | | [7] |
| | | | [8] |
| | | | [9] |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

### Ապրանքներ մատակարարող (առաքող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 2 6 3 9 2 5 7 |
| [12] Անվանումը | «ԲԱԳԱՏԱ ՎՈՒԴ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 2 6 3 9 2 5 7 / 1 |
| [14] Բանկային տվյալները | N |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ 2 ՆՐԲ. 33տ |
| [16] Վայրը, որտեղից ապրանքները մատակարարվում են | Երևան Նորք 3-րդ զ,Գյուրջյան 12/12 |
| [17] Լրացուցիչ տվյալներ | |

### Ապրանքներ ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [18] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 2 0 2 9 6 6 |
| [19] Անվանումը | ԵՐԵՎԱՆԻ N6ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [20] Բանկային տվյալները | N |
| [21] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ Լենինականի 3 |
| [22] Լրացուցիչ տվյալներ | |
| [23] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [24] Ապրանքների մատակարարման (առաքման) եղանակը | |
| [25] Մատակարարվող (առաքվող) ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | Լենինականի 3 |

[26] Մատակարարվող ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ապրանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը | Այդ թվում՝ բնապ. վճար |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համակարգչային սեղան | հատ | 4 | 33333.333 | 133333.33 | 20 | 26666.67 | 160000 | |
| Ընդամենը | | | | | 133333.33 | X | 26666.67 | 160000 | |

Դուրս գրող՝ BARSEGHYAN GAGIK 2012850820
անունը, ազգանունը

*Ստացող՝ GRIGORYAN SONA 5301630539
անունը, ազգանունը

02/05/2017 09:13:24

02/05/2017 09:19:51

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| Երևանի թիվ 6 արհ. ուսումնարան | « ԲԱԳԱԴԱ ՎՈՒԴ» ՍՊԸ |
| Ք. Երևան Լենինականի 3 | ք. Երևան Նորք 2-րդ նրբանցք 33 տուն |
| ՀՎՀՀ 01202966 | ՀՎՀՀ 02639257 |
| Հ/Հ 2474233159740010 ԱՇԻԲ «Մալաթիա» մ/ճ | Հ/Հ 11500312269000 Հայբիզնեսբանկ ՓԲԸ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« 02 » « 05» 2017թ.

Պայմանագրի անվանումը՝ համակարգչի սեղանի ձեռք բերում

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « 25 » « 04 » 2017թ.
Պայմանագրի համարը՝

Պատվիրատուն՝ ի դեմս «Երևանի հ.6 արհ.պետ.ուսումնարան»ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Ս. Գրիգորյանի և Կատարողը՝ « Բագադա Վուդ» ՍՊԸ -ի դեմս տնօրեն՝ Գ.Բարսեղյանի, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները, մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը 25.04.2017թ.-ից -02.05.2017թ.-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամա-նակացույցի) |
|---|---|---|---|---|
| Համակարգչի սեղան | Համապատասխանում է հաշիվ ապրանքագրի տվյալներին | մայիս | 160000 | մայիս |
| | | | | |
| Ընդամենը | | | 160000 | |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան <<25>>ապրիլի 2017թ

Երևանի N6 արհեստագործական պետքկան ուսումնարանը /այսուհետև Պատվիրատու/ ի դեմս տնօրեն Ս. Գրիգորյանի, մի կողմից, և « ԲԱԳԱԴԱ ՎՈՒԴ» ՍՊԸ-ն/ այսուհետ Կատարող/ ի դեմս տնօրեն Գագիկ Բարսեղյանի, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքները /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /ուսուցչի սեղանի ձեռք բերում 160000 ՀՀ դրամ/:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով/ներով/:

**3. Կողմերի իրավունքները և պարտականությունները**

3.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N: 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա/ Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ/ Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանարի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա/ մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ/ խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**4.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

4.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

4.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

4.3 Կատարողն իրավունք ունի`

4.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

4.4 Կատարողը պարտավոր է

4.4.1 Սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը` ղեկավարելով գործող օրենսդրությամբ:

4.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

4.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

5. Ապրանքի գինը և վճարման կարգը

5.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինըկազմում է` 160000 (մեկ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ

վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմիցիրականացվող բոլոր ծախսերը:Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջելավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

5.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ` դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամականմիջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա` Պայմանագրի վճարման ժամանակացույցով` հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթեարձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով` վճարման ժամանակացույցովտվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքիդիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամականմիջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 25-ը:

6. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

7. Ապրանքի հանձնումը և ընդունումը

7.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/` Պայմանագրի N 2 հավելվածումնշված ծավալներով և ժամկետներում:

7.2 Վաճառողը` Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքումԳնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /Հավելված N 4/:

7.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա օրյաժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունմանարձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունմանարձանագրությունը ստորագրելու պահից:

8. Կողմերի պատասխանատվությունը

8.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարմանժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում էտույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջհինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

8.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում նհաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

8.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանողԱպրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրիընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

8.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համարԳնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարմանենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

8.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորություններըչկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրայինպարտավորությունները լրիվ կատարելուց:

## 9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելուհամար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժիազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէինկարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետականմարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրովպարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասիննախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 10. Այլ պայմաններ

10.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումներիմասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբհսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծփաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապաայդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումներիմասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանայինՊայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծմանհետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկՎաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգովփոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումըգնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

10.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 05.12.2014.:Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլպայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր նկնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չիկարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության ՀայաստանիՀանրապետության դատարաններում:

10.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերիփոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրիանբաժանելի մասը:Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում ենգնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխմանդեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

10.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

10.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալպայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխողպարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդելպայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխողպարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդգործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համարպատասխանատու է Վաճառողը:

10.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակիչկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումըկատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծմանկողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀայաստանիՀանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համարանհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսովփոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվինախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

10.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցություններիմիջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

КՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ԵՐԵՎԱՆԻ ԹԻՎ 6 ԱՐՀ. ՊԵՏ. ՈՒՍ. ՊՈԱԿ | « ԲԱԳԱԴԱ ՎՈՒԴ» ՍՊԸ |
| ք. Երևան, Հասրաթյան 3 | ք.Երևան Նորք 2-րդ նրբանցք 33 տուն |
| ՀՎՀՀ 01202966 | ՀՎՀՀ 02639257 |
| Բանկը՝ ԱՇԻԲ Մալաթիա մասնաճյուղ | Բանկը՝ Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| հ/հ 2474233154790010 | h/h 11500312269000 |
| Տնօրեն՝ Ս. Գրիգորյան________________ | Ձեռնարկատեր՝ Գ. Բարսեղյան________________ |